

ԱՄՊԵՐԻՑ ՎԵՐ

ՔՐԱՆՍՈՒԻԱ ԿՈՊՊԵԼ-Ից ԹԱՐՁՄ. ՄԱՐԹԻՀ ՆԱԽԱՏԱՐԴԵԱՆԻ

Բաւական դարի է սահել այն օրից՝ երբ ես սպիտած էի ԺԵՆԿՈՎՄ մի շաբաթ ապրիլ բացառակէս մատախլապատ յունւար ամսի ընթացքում։

Խսկապէս ձմեռն է, պիտուր և մռացլ երկնքի դակ, երբ կալւինական Հռոմը իր բնական պատիերն է զգենում. և միմիայն անցողակի դիսած լինելով զեղեցիկ եղանակներն, ինչպէս անում են պուրիստները, չի նշանակում ճանաչել Ժընել։ Խօնչ յուշեր են պահում միտներում Ժընեի մասին ճամբորդներն իսկապէս և ու լեռների անզուգական փեսարանը, լիճափի շքեղագարդ հիւրանոցները, Աորագրի վայելչաշուք խանութները, Լոզանի շողենաւել բախստակամածի վրայ ճամբորդների համազգի խօսակցութիւնը, — համարեա այս է ընդամենը։ Կալւինի յիշարակը ոչինչ չունի յանկուցիչ։ Քիչերն են զայթակղւում այս սոսկալի հերձւածովի հեռքերը որոնն լու հին քաղաքի նեղլիկ քարափոր փողոցներում և սուրբ Կեպրոսի կամարների դասկ. և ճամբորդը, Ժընեի վերաբերմամբ, դանում է իր հետ վայր ի վերոյ տպաւորութիւն իրեւ մի հարուստ և զեղեցիկ քաղաքի մասին՝ շինւած կախարդիչ ու վեհապանծ դաշտանկառի վրայ։

Ոեֆորմացիայի հին միջնաբերդի սառը, բայց ուժգին, բանասրեղծութիւնն զգալու համար, այնպեղ պէտք է զգնւել ընդհակառակն իսկ ձմռան մէջ գեղը, երբ մթնոլորդի խուռածիւր համեմատ է գեղական բարքերին, և երբ փչում է սառը հիւսիսը կրօնական վէճի պէս կծու կերպով։ Աեման զեպը թագչում է, մշուշի

բակ, կարծես թէ նրա հւշրաւեսոյ լազւարդը երկնչում լինի հուգենսուրական ամօթխածութիւնը վիրաւորելուց, իսկ ծառերի կմախքները պրուրեսպանու քահանայի քարոզի նման չոր են: Ահա, հենց այդ միջոցներում է որ պէսք է մաղլցել բարձր քաղաքի սկ ու խոնաւ փողոցները: Այնորեղ կան յետ ընկած փոքրիկ հրապարակներ, քարէ հին սանդուլքի գլխին փնկւած կնձենիով, ու առանց շարու երևակայութեան՝ մարդ կարող է կարծել՝ թէ որպիշտ որ է կերեալ ինքը կալւի՛ը գլխին թասակ ու հագին սկ շոր, մազուրկ կուան փակը ձարմանդաւոր մի հասոր Ասուածաշունչ, իր բհիրանման միրուքի արանքից անէծքներ մըսմըսթալով թեթևաբարոյ հերերիկոսների դէմ:

Այս մռայլ թաղում՝ գպնւում է նոյնպէս Դռանժ փողոցը, Ժընեի Սէն-Ֆերմէն արւարձանը, որպիշտ՝ հինաւուրց ասղարանըներում բնակւում են խիստ ասրւածապաշտ և շար հարուստ կնշանաւորներ, որոնք փարին փասներկու ամիս պարապում են աղօթելով ու փաղեր դիզելով:

Եթէ աճնուհերեւ իջնելու լինէք քաղաքի նոր մասը և խառնըւէք առևսդրական փողոցների գործունեաց ամբոխի հետ, շար դէմքերի վրայ կը նկատէք նոյն դաժան խսրամիքեր բնոյմքը: Կանայք՝ մուշպակներում փաթթւած և դէմքերը քօղարկած, կարծես թէ թաքցնում են իրենց գեղեցկութիւնը ինչպէս զայթակիլի մի առարկայ, իսկ բորսացի շէմքի վրայ կը հանդիպէք լուրջ և խոհական պարոններին, որոնք բանքիրներ են և իրենց մէջ զրուցում են արժէքների մասին. թէև դուք պիսի կարծէիք թէ դրանք մեկնաբան դոքորներ են ու որևէ սրբազն գրւածքի բացադրութեամբ են զբաղւած:

Թող բարի ժընեցիները ներեն ինձ ներկայ ուրւագծովն արած այս հանաքս: Չեմ մռաննում նրանց ինձ երթին ցոյց դւած սրբաբաց հիւրընկալութիւնը, երբ ես գնացել էի նրանց առաջ բանասրեղծութիւններս արտասանելու, և այն թանգադին համակրանքը, որ ես վայելել եմ նրանցից: Ո՞վ չի հիանայ վերջապէս ու չի յարգի այս հիւրընկալ և ուսումնաւէր քաղաքը, մըքի ու աղարութեան քաղաքը, անթիւ փարագիրների այս բնական ապասրանը:

Սակայն ժընեցիները կը համաձայնին, որ ձմեռը Վեմանի ափե-

րում անհամբոցը է: Հետեւապէս հասկանալի են Փիզիկական սառ-սուռս և փագնապս երբ ես յունւար ամսի այս առաւօգուն, լուսա-մուգիս ապակիների միջից, հէնց զարթնելուն պէս, փեսայ մի յուսա-հար ու սպանիչ մթնոլորտ, մուր հոգող մի գարշելի մառախուղ, որ մինչեւ իսկ ներքին սենեակներն էր թափանցում:

Յանկարծ բարեկամս, որի հիւրն էի, ներս մգնելով սենեակս ասում է ինձ ուրախ դէմքով.

Կամենում էք արեգակը տեսնելու Սկզբում կարծեցի թէ շա-րածընի կապակ էր: Ոչ ամենեին. Դրանից հեշտ բան չըկար: Պէտք էր միայն կառք նստել, ուղևորւել մինչ մի որոշ բարձրութիւն Սալե լեռան լանջին, ապա մազլցել քանի մի քայլաչափ որով սարի վրայ և դուք կը գտնեէք մառախուղից վեր, կը գեսնէք արեն ու կապոյց երկինքը:

Ճշմարիսը պէտք է խոսպովանել: Ահաւասիկ մի զւարճանք, որը անկարելի է ձմռան մէջ վայելե, Պարիզում, ևոյն իսկ Մոնմարտ-րում Սակրէ-Կէօր աշխարհակի գագաթին վրայ:

Պարզ է, որ ուրախութեամբ ընդունեցի այս հրապուրիչ առաջարկը ու մի կէս օամ միջոցից յետոյ մենք նստեցինք մի շապ յարմար լանդօյում, որի պատուհանները սակայն անթափանց էին Դրսի մառախուղի պարճառով, և այսպէս զրկւած էինք արփաքին աշխարհի գեսութիւնից:

Սկզբում արշաւում էինք բաւական երկարագու միջոց արա-գաքայլ, ապա հանդարտ, վերելքը ձիերի զործած ճիգից զգալով միայն, որը կառքի մէջ նստածին պարզապէս զգալի է: Երբ մեր կառքը կանդ առաւ, որպէս Դրինք գետին, շրջապատւած ամօյերով:

Ցուրտը խիստ էր Դալում: Տասը քայլաչափ հեռաւորութեան վրայ ոչինչ չէր դեմնուում: Սակայն հարկ էր գետնին նացել անիւ-ներից առաջացած ակօսների և կէս սառած ցեխի մէջ ընկնելու համար: Ճամբի աջ ու ձախ կողմերում ծառերի բռները թիթեակի սեացած կարծես թէ բամբակի մէջ փաթթւած լինէին: Թէ և ես, այն ժամանակներում, յաւ որագնաց էի—աւաղ այժմ այլ ևս չիմ— վլրելքը ինձ ծանր թւաց: Մարդ քրիստում էր վերարկուի բակ, հեթեթում էր, և մենք, ևս ու ընկերս, քիթ ու բերնից թանձր գոլորշի էինք արփափչում: որն իսկոյն ցրւում և խառնուում էր մշուշի:

հետո Սակազն յենւելով ձեռնափայտերին ու ալպինիարների նման երկայնաքայլ առաջանալով դժոնդաշորէն գնում էինք և բարձրանում փոքր առ փոքր սպիտակ գոլորշու միջով։

Վերջապէս այդ գոլորշին թեթեակի ներկեց վարդագունի, որ արեկի ներկայութեան նշան էր։ Մենք մերձենում էինք մեր նպատակ էէտին։ Այժմ մ. նք որոշում էինք քարափների թաց դալարը, կաղնիների ծիծւառ կեղև, մշտագերեւ մացաների կանաչութիւնը։ Ի վերջոյ մեր դիմացը մշուշից դուրս ցցցւեցան եղեինների կափարները, և մեր գլխից վերև տարածւեց քնքով ու ընդիր կապուփակ լոյս։

Այս երկինքն էր. մենք ամպերից վեր էինք գրնւում։

Կարող եմ հարիւր տարի ապրել — որ չեմ ցանկանում և որ կը լինէր անմիտ ու գալթակղիչ — առանց մոռանալու սքանչացումն, արբումն, որ ինձ տիրել ու կաշկանդել էր այն միջոցին հրաշալի փեսարանի դէմ։

Մենք գոհուում էինք մի փեսակ սարաւանդի գագաթի վրայ, որպեշից մեր չորս բոլորը տարածւում և ծաւալուում էր մեր աչքի առաջ կաթնապոյն ու անեզր ծովածոց։ այդ մառախուղն էր, որի միջից բարձրացել էինք և որի անդունդի մէջ գոհուում էր մընս իր լիճով։ Այդ գոլորշու ծովից լսում էր ծիչ, կոչ, կառքերի գըռգըռոց, երևմ շողեկառքի սուր սոյլ, մեծ քաղաքի ամրող դշորդի։ Ես երազեցի այնպեղ խօրհրդաւոր Արլանփիդը ու լիշեցի իս քաղաքի առասպելը, որն անդնդասոյզ կորաւ Մորբիհանի կոհակներում և որի մասին փոթորիկից բռնւած նաւասփիները հաւասարում են թէ լսում են անհետացած քաղաքի զանգերի զողանջը։

Մեր դիմացը, այսպէս ասած, միւս եզրի վրայ, ամպերից վեր էր նայում իւրա լեռնաշղթան բոլորովին ճերմակ, այն ինչ մ. ը աջակողմը կաթնապին ովկիանոսը հորիզոնում կորչում և անհետանում էր անորոշելի երփներանգներով երկնքի գունադր լազւարդում։ Երբեմն կեմանի ամար թռչունը վեր էր թռչում ցանկարծ մշուշապար խորխորափից, սլանում էր մի երկու բոպէաչափ լայնածաւալ լոյսի մէջ ու ժղին թեւահարումներով։ ապա մինում, ընկլմում էր ամպերի մէջ սուր ծիչ արձակելով, կարծես թէ ոզում էր անդունդի մէջ սողացող մեծ քաղաքի բնտիհներին ծաղրել սրանով։ և ոչինչ չկար աւելի զարմանահրաշ քան թէ այս սպիտակ ծովը,

որպեղից վերթունում և նորից սուզում էին անդադար թռչունները։ Այս ամեն հրաշալիքների վրայ լողում էր յաղթանակօբէն ձմեռային, պարզ ու պաշտ արեգակը երկնքում, դարածելով հեռուն ձիւնապար գագաթների վրայ մի պաշտելի եռանգով մասի ցոլք, մեր շուրջը գոնուող թաց արօնները գոհարի նման շողացընելով։

Այս, կը յիշեմ միշտ սրտիս անուշիկ թռիթիուր, ոգեսրութիւնս, խորունկ հառաջները, երբ, հակառողջ ու մասյ մառախուղի միջով դժւարին վերելքից յետոց, ես գոնուեցի անսպասելի կերպով բնութեան այս դիւթախտալի դէմ-դիմաց և մնացի ապշտ այնչափ փառահեղութեան և կարարելութեան հանդէպ։

Ի՞նչ պարճառով սակայն արդէն վալուց անցած ու կարելի է կեանքիս մէջ միակ այդ հրաշալի բապաւորութեան յուշը վերանորոգում է ինձանում այսօր այդշափ յամառօրէն։

Ահ, այդ նրանից է, որ ես գանջւեցի սոսկալի կերպով և դարձեալ բանջւում է մարմինս ամեն օր։ այդ նրանից է, որ ահա, ինձ համար, հասել է արդէն կեանքիս ձմեռը, ծերութիւնը իր բարութիւններով։ Նաք ժամանակ չէ անցել, որ այս անկումը յուսահարեցնում է ինձ և ես շնչասպառ էի լինում խաւարացին մառախուղի մէջ։ Բարեբախտաբար բարեպաշտ ու հայրախնամ բարեկամիս աջը հասաւ ինձ օգնութեան, նա ինձ հրամայեց հասպառ բարեսրութեամբ կանգնել ուղիղ ճամբի վրայ ու բարձրանալ դէպի լոյսը։ Անշափ բախտաւոր եմ զբնելով վերսպին մէջս հոգուս և մանկական ալօթքներիս մի փոքր մասը 0'հ, քաղցր է լինել հեզ, հաւափ ու նենալ ու հնազանդւել։ Հազիւ անցել եմ առաջին կայանքը և ահա ցրում է գոռողութեան ու ամբարիշտութեան մառախուլը, որ ինձանից թաքցնում էր ուղիղ ճամբան։

Եւս բարձր, հողի իմ Միշտ դէպի վեր, Երկնքի վրայ մեզ բեսանելիներիցն էլ առաւել բարձր։ Ի՞նչ յիշողութիւն է վերանորոգում մոքիս մէջներից ժամին։ Սարի վրայ ես բարձրանում էի դէպի արեգակը միայն։ Այսօր ես ամբառնում եմ դէպի մի աւելի ապշեցուցիչ անհամեմափ սրբութիւն։ որովհետեւ հրեշտակապեպի շափ գեղեցիկ ասութեամբ՝ արեգակը Ասործու սրւերն է միայն։